



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ԷԴՄՈՆ ՄԱՐՈՒՔՅԱՆԻ

2014թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԻՐԵԼԻՔԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ,

Հավատարիմ մնալով ձևավորված ավանդույթին՝ Ձեզ եմ ներկայացնում իմ կողմից 2014թ. ընթացքում իրականացրած պատգամավորական գործունեության արդյունքները: Բնչպես նախկինում, այնպես էլ այս տարի, մշտական կապ պահպանելով թիվ 30 ընտրատարածքի բնակիչների հետ, շարունակել եմ ընդունելությունների կազմակերպումը՝ Վանաձոր քաղաքում մշտական հիմունքներով գործող իմ պատգամավորական գրասենյակում, ինչպես նաև ստացել բազմաթիվ գրավոր դիմումներ և առաջարկություններ: Հետևողականորեն բարձրացրել եմ քաղաքացիներից ստացված հարցերն ու առաջարկությունները ՀՀ պետական կառավարման մարմինների առջև ինչպես Խորհրդարանի ամբիոնից, այնպես էլ օգտագործելով տարբեր քաղաքական հարթակներ: Իրականացրել եմ բազմաթիվ համադիպումներ թիվ 30 ընտրատարածքի համայնքներում, Վանաձոր քաղաքի բակերում, ուսումնական և այլ հաստատություններում, հասարակական կազմակերպություններում՝ նպատակ ունենալով մշտապես անձամբ իրազեկվել տարածքում առկա խնդիրներին և հնարավորինս աջակցել յուրաքանչյուր քաղաքացու՝ իմ լիազորությունների շրջանակներում: Հարկ է նկատել, որ իմ պատգամավորական գործունեությունը բնավ չի սահմանափակվել թիվ 30 ընտրատարածքի խնդիրներով. ակտիվորեն մասնակցել եմ համապետական բոլոր խնդիրների քննարկմանն ու դրանց լուծման ուղղությամբ ՀՀ Ազգային ժողովում իրականացվող աշխատանքներին:

Մտորել, ըստ դրոստների, ներկայացված են իմ գործունեության որոշ արդյունքներ: Նշված հիմնախնդիրները բարձրացվել են ինչպես առանձին պատգամավորական հարցումների, գրությունների, այնպես էլ հայտարարությունների, ելույթների ու հարցերի միջոցով՝ Կառավարության հետ հարց ու պատասխանի կամ առանձին նախագծերի ներկայացման ու քննարկման ժամանակ:

Սոցիալ-տնտեսական ոլորտ

- Բարձրացրել եմ գազի գնի ու դրա կայրիակալության ոչ համաչափ հարաբերակցության և գազի գնի շարունակական բարձրացման հարցերը, աջակցել եմ տվյալ հարցը քննելու համար հատուկ հանձնաժողով ստեղծելու առաջարկին:
- Հարունակական կերպով բարձրացրել եմ ՀԽՍՀ Խնայարանկում ներդրված ավանդների դիմաց փոխհատուցում տրամադրելու կարգում ծեր ու վատառողջ անձանց համար առաջնահերթություն սահմանելու անհրաժեշտությունը, միաժամանակ այս հարցով բոլոր առանձին նամակների վերաբերյալ դիմել եմ Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարություն:
- Խորհրդարանում մի շարք ապրանքատեսակներ դրոշմապիտակավորելու վերաբերյալ նախագծին դեմ եմ արտահայտվել ու բարձրացրել դրա հետևանքով ապրանքների հնարավոր թանկացման ռիսկերի հարցը, միաժամանակ գրությամբ դիմել եմ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահին՝ առաջարկելով անցկացնել կաթնամթերքի ու դրան հարակից շուկաների հետազոտություն՝ պարզելու համար տվյալ ապրանքատեսակների գների թանկացման պատճառները:
- Առաջարկել եմ մեղմացնել այն պարտադիր պահանջները, որոնք բավարարելու դեպքում միայն հնարավոր է գինծառայողներին ապահովել բնակատարածությունով: Կառավարությունը չի ընդունել իմ առաջարկված լուծման տարբերակները, սակայն հարցը մնում է օրակարգում և եկթակա է հետագա քննարկման ու լուծման:
- Ելույթով անդրադարձել եմ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկման խնդիրներին՝ մասավորապես բարձրացրել այն հարցը, որ հազուստի մանրածախ առևտրով զբաղվողները մեծ վնասներ կկրեն փաստաթղթավորման ու հաշվապահ վարձելու պարտադիր պահանջները բավարարելու դեպքում, առաջարկել եմ այդ անձանց բերել հաստատագրված վճարով հարկման դաշտ:
- ՀՀ Վերահսկիչ պալատի նախագահին առաջարկել եմ Վերահսկիչ պալատի 2015թ. տարեկան ծրագրում որպես առանձին թեմա ներառել և մանրամասն քննության առարկա դարձնել նաև «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ կրած վնասների իրական չափերը, քանի որ այդ վնասը յուրաքանչյուր տարի սուբսիդավորվում է պետական բյուջեի հաշվին:
- Եվրասիական տնտեսական միության անդամակցելու հարցը խորհրդարանում քննարկելիս հարց եմ

բարձրացրել ընթացիկ և սպասվող թանկացումների և այլ խնդիրների մասին, որոնք առաջ են գալու այդ անդամակցության հետևանքով: Անդրադարձել եմ Եվրոպական միության հետ ստացման համաձայնագիրը կնքելու առավելություններին և, ինչպես հայտարարել էի իմ ելույթում, դեմ քվեարկել ԵՏՄ պայմանագրին:

Գատախրավական ոլորտ

- Կողմ եմ եղել ՀՀ Քննչական կոմիտեի ստեղծմանը, միաժամանակ բարձրացրել Լոռու և այլ մարզային, Վանաձորի քաղաքային քննչական բաժինների շենքային պայմանների, ինչպես նաև քննիչների նյութական ապահովվածության ու կենսաթոշակավորման հարցերը:
- ՀՀ քաղաքացիական և վարչական դատավարությունների օրենսգրքերում լրացումներ կատարելիս առաջարկել եմ խմբային հայցերով որպես խմբի ներկայացուցիչ դատարանում հանդես գալու հնարավորություն տալ նաև իրավապաշտպան հասարակական կազմակերպություններին: Առաջարկությունն ընդունվել է:
- Բազմիցս անդրադարձել եմ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար սահմանված տուգանքների չափի իջեցման ու դրանց ետա- և հնգապատկումները վերացնելու անհրաժեշտության հարցին: Հետևողական աշխատանքի արդյունքում այս հարցն ստացել է դրական լուծում:
- Բարձրացրել եմ պետության կողմից մարդու հիմնարար իրավունքների խախտման հետևանքով պատճառված բարոյական վնասի դիմաց համարժեք հատուցում տրամադրելու հարցը, ինչի շնորհիվ քաղաքացիական օրենսգրքում կատարվող լրացումներով ընդլայնվեց այն իրավունքների շարքը, որոնց խախտման դեպքում պետությունը կրում է բարոյական վնասը հատուցելու պարտավորություն: Միաժամանակ բարձրացրել եմ արդարացի փոխհատուցում տրամադրելու և օրենքին հետադարձ ուժ տալու խնդիրները:
- Վարչարարության հիմունքները բարեփոխելիս բարձրացրել եմ անձանցից առանց դատարանի որոշման՝ վարչական ընթացակարգերով սեփականությունից (այդ թվում՝ դրամական միջոցներից) զրկելու հակասահմանադրականության հարցն ու առաջարկել դատարանների բեռնաթափման խնդիրը լուծել այլ՝ իրավաչափ տարբերակով:
- Անդրադարձել եմ հարկադիր կատարման ծառայությունից բանկային հաշվի որոշակի մասի վրա արգելափակումները վերաբերյալ ակտիվ քննարկելի կողմից ստանալիս ամբողջ հաշվին արգելափակումները արատավոր պրակտիկային, ԴԱՀԿ ծառայության կողմից որպես կատարողական գործողությունների վճար անհամապատասխան գանձվող գումարներին: Վերջին առաջարկության հիման վրա արդարադատության նախարարությունը մշակել է խնդիրը կարգավորող նախագիծ, որով մինչ այժմ որպես նվազագույն կատարողական ծախսեր սահմանված 5.000 ՀՀ դրամը նվազացվում է այնքան, որ չզերազանցի փաստացի բռնագանձվող գումարի չափը:
- «Մահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը քննարկելիս անդրադարձել եմ այն հարցին, որ պետությունը պետք է հատուցի սահմանամերձ գոտիներում թշնամու ուղղման կարգավորումներին հետևանքով քաղաքացիների գոյրին պատճառված վնասները, ինչպես նաև այդ բնակավայրերի ուսանողների ուսման վարձի բեռը թեթևանցնելու խնդիրին:
- Խորհրդարանում ամբողջությամբ համամասնական ընտրակարգին անցնելու հարցը քննարկելիս ելույթ եմ ունեցել ու դեմ արտահայտվել նախաձեռնության վերաբերյալ՝ շեշտադրելով համամասնական (կուսակցական ցուցակերով) ընտրակարգի էական թերությունները, հատկապես, ընտրողների իրական կամքը հաճախ չարտահայտելու փաստը, ինչպես նաև անկուսակցականներին խորհրդարանում մանրատ հատկացնելու փաստացի արգելքը: Օրենքի նախագիծն Ազգային ժողովի կողմից չի ընդունվել:

Կրթության և մշակույթի ոլորտ

- Կրթական բարեփոխումներին միտված վարկային ծրագրերը քննարկելիս բարձրացրել եմ անարդար կերպով դպրոցների միջև միջոցները բաշխելու խնդիրն ու առաջարկել հատկապես մարզային ամենակարիքավոր դպրոցներին վերանորոգման համար միջոցների տրամադրումն առաջնահերթ դիտարկել:
- Առաջարկել եմ պատմամշակույթային հուշարձան-



ներն ապօրինաբար մարզերից Երևան կամ այլ վայրեր տեղափոխող անձանց համար պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դրույթ սահմանել՝ հետագայում նման իրավիճակներից խուսափելու համար: Բարձրացրել եմ այդ հուշարձանները մայրաքաղաք տեղափոխելու հետևանքով մարզերում զբոսաշրջության նվազմանն ու այլ բացասական հետևանքներին: Առաջարկել եմ մարզերից տեղահանված հուշարձաններն իրենց նախնական գտնվելու վայրեր վերադարձնել ու բարեկարգել դրանք տեղերում ցուցադրանքներ կազմակերպելու համար:
- Բարձրացրել եմ Հայ բժշկության թանգարան հիմնելու հարցը, որին առողջապահության և մշակույթի նախարարությունները դրական են արձագանքել, սակայն թանգարանի տարածքի հարցը դեռևս լուծման կարիք ունի:

Սեփականության պաշտպանության և աշխատանքային ոլորտ

- Բարձրացրել եմ Վանաձորի պոլիլինիկաների աշխատակիցների առանց այդ էլ ցածր աշխատավարձերի նվազեցման հետևանքով կադրերի արտահոսքի խնդիրը:
- Առաջարկել եմ, որ մարզային ուսումնական հաստատություններում ուսուցիչ թափուր աշխատատեղի համար անցկացվող մրցույթի վերաբերյալ հայտարարությունը տրվի ոչ միայն «Կրթություն» շաբաթաթերթում, այլ նաև համապատասխան մարզում տպագրվող թերթերում: Առաջարկն ընդունվել է:
- Բազմաթիվ ելույթներով ու գրավոր հարցապահումներով հետևողականորեն բարձրացրել եմ Վանաձորի քիմիական գործարանի հարցը, մասնավորապես՝ գործարանի ապագայի և աշխատակիցների չվճարված աշխատավարձերի վերաբերյալ: Իմ կողմից որպես լուծման տարբերակ առաջարկվել է գործարանը վերակազմակերպել մանր արտադրամասերի, որպեսզի հնարավոր լինի խուսափել լուծարումից: Գործարանի ապագայի հետ կապված խնդիրները դեռևս քննարկման փուլում են:
- Անդրադարձել եմ քաղաքացիների ստաժը պակաս հաշվարկելու արատավոր պրակտիկային՝ այն առումով, որ սոցիալական որոշ ծառայությունների կողմից իրականացվող ձևական վարչարարության հետևանքով անձից զրկվում են իրենց աշխատած տարիները ստաժում հաշվարկելու, հետևաբար նաև այդ տարիների համար ևս կենսաթոշակ ստանալու հնարավորությունից: Միաժամանակ, գրավոր ընթացակարգով ներկայացրել կոնկրետ անձանց հետ կապված դեպքեր, որոնք համապատասխան հիմքերի առկայությամբ՝ վերահաշվարկվել ու դրական լուծում են ստացել:

Շինարարության և վերականգնման ոլորտ

- Գրավոր ու բանավոր կերպով դիմել եմ կառավարությանն ու բարձրացրել Վանաձորի ֆիզմաթ խոբցված ուսուցմամբ «Հվրիկա» դպրոցի շենքային պայմանների բարելավման հարցը: Տվյալ խնդիրը դեռևս չի լուծվել, սակայն այն մշտապես պահում եմ կրթության նախարարության ուշադրության կենտրոնում՝ մինչև դրական արդյունքի հասնելը:
- Բազմաթիվ անգամ դիմել եմ ՀՀ կառավարությանը՝ բարձրացնելով Խնձորուտի Երկրորդ փողոցի սաֆալտապատման խնդիրը և առաջարկել միջոցներ տրամադրել փողոցի հիմնանորոգման համար:
- Վանաձոր համայնքի ղեկավարին առաջարկել եմ միջոցներ հատկացնել Վանաձորի տարեցների

տուն տանող ճանապարհի նորոգման համար: Ըստ քաղաքապետարանից ստացված տվյալների՝ նախատեսվել է իրագործվել են գրության մեջ նշված փողոցի վերանորոգման աշխատանքները:

- Վանաձորի բնակիչների խնդրանքով դիմել են Վանաձորի քաղաքապետին՝ բարձրացնելով Սատունցիների, Բաթումի, Թումանյան, Ներսիսյան, Ֆիդայիների փողոցներում «Դոռոժիկ» ՄՊ ընկերության կողմից կատարված անտրակ և/կամ անավարտ ասֆալտապատումներին՝ խնդրելով հանձնարարել ընկերությանը կատարել իր պարտականությունները՝ ավարտին հասցնել նշված փողոցների ասֆալտապատումը: Նշված գրություններն ստացել են համապատասխան ընթացք՝ «Դոռոժիկ» ընկերությանը հանձնարարվել է ավարտին հասցնել իր կողմից ստանձնված պարտավորությունների կատարումը:
- Միաժամանակ, ըստ համապատասխան դիմումների, բարձրացրել են Ֆիդայիների փողոցի լուսավորության, դեպի Բաթումի փողոց տանող աստիճանների նորոգման, Բաթումի փողոցի բարեկարգման ու լուսավորման, 19 շենքի բակում գտնվող վթարային պատի վերանորոգման, Ներսիսյան 7 շենքի տանիքի, Թումանյան 11 շենքի ջրահեռացման համակարգի նորոգման, Տիգրան Մեծի 44 շենքի վերելակի, Վանաձորի թիվ 24 դպրոցի հարակից տարածքի ջրահեռացման համակարգի նորոգման, Տարնո 3 թաղամասի Ուկրաինական փողոցի լուսավորության ու վերանորոգման հարցերը: Նշվածներից շատերն իրենց լուծումն ստացել են 2014թ. ընթացքում, մյուսները, ըստ քաղաքապետարանից ստացված տվյալների, ենթակա են լուծման համապատասխան ֆինանսավորման առկայության պարագայում 2015-2016թթ. ընթացքում:
- Դիմել են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն՝ առաջարկելով միջոցներ տրամադրել Արվարդի-Ստեփանավան ճանապարհի Օձուն-Ազարակ ճանապարհահատվածի հիմնանորոգման խնդիրը լուծելու համար: Նախարարը պատասխանել է, որ նշված հատվածի վերանորոգման աշխատանքները ներառվել են Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի 2015-2016թթ. աշխատանքային ծրագրում:

Պետական կառավարման ոլորտ

- Բարձրացրել են համայնքների ղեկավարների՝ անսահմանափակ թվով անգամ վերընտրվելու հնարավորությունն օրենքով արգելելու անհրաժեշտության հարցը:
- Բարձրացրել են ֆինանսական համահարթեցման դրույթների 25%-ից ավելին միայն մայրաքաղաքին տրամադրելու և մարզային խնդիրներն անտեսելու իրողությունը՝ առաջարկելով վերանայել տրամադրվող դրույթների հաշվարկման չափանիշները:
- Անդրադարձել են պետական ապարատի ուղեղավածության ու պետական բազմաթիվ մարմիններ, հիմնարկներ ու շատ հաստիքներ կրճատելու անհրաժեշտության խնդրին, առաջարկել օպտիմալացնել հաստիքային գործադիր իշխանության մարմինների համակարգը:
- Քննարկման առարկա են դարձրել տարածքային համաչափ զարգացման հիմնախնդիրը մասնավորապես, նշելով, որ այդ դրույթը, որպես առանձին կետ ներառված է կառավարության ծրագրում, սակայն փաստացի Հայաստանը դառնում է մայրաքաղաք-պետություն, քանի որ մարզերում ֆինանսավորում չկա, ինչից հատկապես տուժում են առողջապահական ծառայությունները, ճանապարհաշինությունը, մյուս ոլորտները: Առաջարկել են վերանայել պետական բյուջեի նախագծի մի շարք հատվածներ ու առանձին քննարկման առարկա դարձնել այս հարցը:

Այլ ոլորտներ

- Կողմ են արտահայտվել մարտի 1-ի դեպքերի ուսումնասիրության համար ԱԺ ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու հարցին:
- ՀՀ վարչապետին, տրանսպորտի և կապի նախարարին, ինչպես նաև ՀՌԱՀ նախագահին գրավոր հարցերով դիմել են Լոռու մարզի Գուգարք համայնքում հեռուստաընկերությունների քանակի նվազեցման խնդրի վերաբերյալ, ինձ հայտնել են, որ 2015թ. ընթացքում թվային ցանցերի ներդրումից հետո Գուգարքում կհետարձակվի թվային բարձր որակի մուտավորապես 8 հեռուստալիք:
- Բարձրացրել են նաև մարզային հեռուստաընկերությունների անալոգային լիցենզիաների ժամկետի երկարացման անհրաժեշտության, միանգամից 14 հեռուստաընկերությունների փակման անթույլատրելիության հարցերը, ինչին նախարարներ Գագիկ Բեգլարյանը և Դավիթ Հարությունյանը պատասխանել են, որ կառավարությունն անհրաժեշտության դեպքում հանդես կգա համապատասխան նախաձեռնությամբ:

«ՀՀ 2015թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացրել են հետևյալ առաջարկությունները.

- Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Վանաձորի մասնաճյուղի շենքի հիմնանորոգման համար 25 մլն ՀՀ դրամ միջոցների հատկացում,
- «Գեղագիտության ազգային կենտրոնի» Վանաձորի մասնաճյուղի հիմնանորոգման աշխատանքների համար 19.8 մլն ՀՀ դրամ միջոցների հատկացում,
- Վանաձորի Ադայան 65 շենքի ամրացման աշխատանքների համար միջոցների հատկացում (ներկայացվել է փորձագիտական եզրակացությունը),
- Առաջարկել են «ՀՀ 2015թ. պետական բյուջեի մասին» օրենքը խմբագրել այնպես, որ առաջին խմբի հաշվառման ենթակա ստանան առևտրի անվագ նվազագույն սպառողական զամբյուղի մասնական արժեքին համարժեք (56.600 ՀՀ դրամից ոչ պակաս) կենսաթոշակ,
- Առաջարկել են «ՀՀ 2015թ. պետական բյուջեի մասին» օրենքով պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատակիցների սոցիալական փաթեթով ապահովման ծրագրի շահառուների ցանկում ընդգրկել նաև միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների աշխատակիցներին:
- 2015թ. պետական բյուջեի նախագծի քննարկումներին հանդես են եկել երկրորդ ու, ի թիվս այլ խնդիրների, կրկին անգամ շեշտել Վանաձորի 3-րդ կարգի վթարային 84 շենքերի ամրացման, խորհրդային տարիներին ներդրված ավանդների դիմաց փոխհատուցում տրամադրելու, դրույթների բաշխման չափանիշների ոչ օբյեկտիվ լինելու խնդիրները:
- Վերոնշյալ առաջարկներից ՀՀ Կառավարությունն ընդունել է առաջին երկուսը և օրենքի նախագծի ծախսային մասում կատարել համապատասխան (մոտ 45 մլն ՀՀ դրամի) լրացումները:

2014թ. ընթացքում իմ կողմից (ինչպես նաև համահեղինակությամբ) ներկայացվել են մեկ տասնյակից ավելի օրենսդրական նախաձեռնություններ, որոնցից հատկապես կարևորում են հետևյալները՝

- «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը (համահեղինակությամբ). նախագծով առաջարկվում է սահմանել, որ մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դրած քաղաքացուն սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում նրա մուտքը խաղատուն արգելվի, սահմանվում է այդ տրմի կիրառման կարգը, ինչպես նաև հնարավորություն, որպեսզի անգամ թե՛ս անձը նշված հիմքով սահմանափակ գործունակ չի ճանաչվել, նա անձամբ ներկայացնի դիմում՝ իր իսկ մուտքը խաղատուն արգելելու նպատակով (կարգավորումները վերցված են առաջատար զարգացած երկրների օրենսդրություններից ու լավագույն փորձից):
- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը. դրանով առաջարկվում է վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման լիցենզիաներն առանձնացնել՝ ըստ համապատասխան գործունեության տեսակների, ինչի արդյունքում լիցենզիա հայցող անձն այլևս պարտավոր չի լինի իր կողմից չիրականացվող գործունեության համար սահմանված պահանջները բավարարել:
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը. դրանով համակարգային կարգավորման են ենթարկվում նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթը քրեական և վարչական դատավարություններում:
- «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծը (համահեղինակությամբ). նախագծով առաջարկվում է պարտադիր զինվորական ծառայության ժամանակ կրտսեր հրամանատարական պաշտոն զբաղեցրած, այնուհետև պահեստագործ ընդգրկված և հաշվառված, բարձրագույն կրթություն ունեցող անձանց պարտադիր զինվորական ծառայության այդ ժամանակահատվածը համարել պետական կառավարման ոլորտի ստաժ:
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը (համահեղինակությամբ). նախագծով առաջարկվում են մեղմացումներ որոշակի տեսակի ճանապարհային երթևեկության կանոնների խախտման դեպքում պատասխանատվության համար՝ հաշվի առնելով դրանց նվազ հանրային վտանգավորությունը:
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում ու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին օրենքների նախագծերի փա-

թեթը. փաթեթը կարևոր բարեփոխում է նախատեսում վարչական և քրեական դատավարություններում (այն նաև լրամշակվելու է և դրանում ներառվելու է քաղաքացիական դատավարությունը) վճարել բողոքը քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից ոչ միայն փաստաբանի միջոցով, այլ նաև անձամբ ներկայացնելու հնարավորությունը ընձեռելով:

- ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը. վերջինիս ընդունմամբ կմեղմացվեն «Ժամանակակից ներմուծում» մաքսային ռեժիմով թեթև մարդատար մեքենաներով Հանրապետություն այցելելու կարգավորումները, ինչը հատկապես դրական ազդեցություն կունենա Ռուսաստանում և Վրաստանում բնակվող մեր հայրենակիցների համար:

ՀՀ Ազգային ժողովի պատվիրակության կազմում Հայաստանը ներկայացրել են Ստրասբուրգում (ԵՄ-Հայաստան խորհրդարանական համագործակցության համաժողովի գործունեության ընթացքում):

2014թ. մարտին ահաբեկիչների կողմից հայկական Քեսաբ քաղաքը գրավելուց հետո պատգամավորական խմբի կազմում մեկնել են Սիրիայի Լաթաքիա քաղաք, հանդիպել տեղահանված հայկական համայնքի ներկայացուցիչներին՝ տեղում իրավիճակին ծանոթանալու և Հայաստանի Հանրապետության գորակ ցույցները հայտնելու նպատակով: Հանդիպումներ են եղել նաև Սիրիայի իշխանությունների հետ, ինչի արդյունքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել հայկական համայնքի շահերը պաշտպանելու վերաբերյալ: Այցելությունից հետո ակտիվորեն շաչակցում են իրականացվող հանգանակությանը, ինչպես նաև դեպքերի իրական պատկերի ներկայացմանը իրավապաշտպան և լրատվական լայն շրջանակներով:


Որպես Ազգային ժողովի Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի անդամ՝ մասնակցել են արտագնա նիստերին Լեռնային Ղարաբաղում, իսկ օգոստոսյան սահմանային լարվածությունից հետո՝ այցելել շվեդական առաջնային գիծ, խոսել զինվորների և սպայական անձնակազմի հետ ու մեր գորակցությունը հայտնել մեր զինվորներին:

www.parliamentmonitoring.am կայքի վիճակագրական տվյալների համաձայն ամենաակտիվ պատգամավորների շարքում զբաղեցնում են 3-րդ տեղը: Ամենաակտիվ պատգամավորների տասնյակում ընդգրկված պատգամավորներից միակն են, ով ընտրվել է մեծամասնական ընտրական համակարգով: Այս ընթացքում ունեցել են 130 ելույթ՝ անդրադառնալով ավելի քան 28 տարբեր ոլորտների առնչվող հարցերի:

2014թ. ընթացքում, ինչպես և նախորդ 2.5 տարիներին, թե՛ իմ ընտրատարածքից, թե՛ Հանրապետության այլ բնակավայրերից ստացված բողոք դիմումներին, անկախ այն հանգամանքից, թե՛ դրանք ունեցել են անձնական, տեղական, թե՛ հանրապետական նշանակություն, տրվել է համապատասխան ընթացք, դրանցից որևէ մեկն անպատասխան կամ անհետևանք չի մնացել:

Ընթացիկ տարում ուղարկել են 170-ից ավել գրություններ, որոնցով քաղաքացիներին համար լուծվել են պետական մարմինների գործունեության հետ կապված տարբեր խնդիրներ, ստացել են մոտ 70 գրավոր դիմում: Վանաձորի պատգամավորական գրասենյակում, Ազգային ժողովում և այլ վայրերում կազմակերպված հանդիպումների, քննարկումների, լսումների ընթացքում ընդունել են 460-ից ավելի քաղաքացիների:

Իմ ամենօրյա պատգամավորական գործունեության մասին մանրամասն տեղեկատվությունը, տեսանկյունները և հարցազրույցները պարբերաբար տեղադրվում են իմ պաշտոնական կայքէջում՝ www.edmonmarukyan.com ինչպես նաև տարածվում հայտնի սոցիալական ցանցերով:



Լավագույն մաղթանքներով,
ԷԴՄՈՒ ՄԱՐՈՒՔՅԱՆ
ՀՀ ԱԺ պատգամավոր